ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 նոյեմբերի 2021 թվականի N 1825 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱ-ԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N 36-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության՝ անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերի գրանցման ու կազմման չափորոշիչները և դրանց հիման վրա կազմված ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը հաստատելու մասին» N 36-Ն որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) ուժը կորցրած ճանաչել 6-րդ կետը.

2) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

7.	Բարեկեն-դան	Ժողովրդա-կան տոն	Բարեկենդանը ժողո-վրդական տոն է, որը շարժական է՝ պայմա-նավորված Զատիկով: Տևողությունը երկու շաբաթ է: Երկրորդ շաբաթը կոչվում է Բուն Բարեկենդան: Տոնը բնութագրվում է համայնական երգ ու պարով, խնջույքնե-րով, խաղերով ու զվարճություններով, դիմակավորված ներ-կայացումներով, ավանդական կանոնա-վորված կենցաղային բարքերի գլխիվայր շրջմամբ (ներառյալ վանական խստակյաց բարքերով՝ Աբեղա-թողի ծեսը), բազմա-զան ու համադամ ուտեստով և այլն: Լինելով շարժական՝	Բարեկենդանի տոնը մինչև 20-րդ դարի սկիզբը հայկական ամենասիրված տո-ներից էր, որն ուղեկցվում էր դիմակավորված ներկայացումնե-րով, խաղերով, պարերով: 20-րդ դարի սկզբներին ընդհատված Բարեկենդանը շատ ընդհանրու-թյուններ ուներ եվրոպական և սլավոնական ժողովուրդների դիմակահանդես-ների հետ: Այդ ժամանակաշրջանի տնտեսական, քաղաքական, հասարակական, մշակութային	Տարրի կրողնե-րը ՀՀ տարբեր համայնքների կրտսեր, երի-տասարդ, միջին և ավագ տարիքի մարդիկ են:	Բարեկենդանի տոնը, որպես հայկական ոչ նյութական մշակութային ժառանգու-թյան գունեղ դրսևորում, կարիք ունի ան-հապաղ պաշտպանության, կենսունա-կության խթանման և տարածման: Որպես հախուռն տոնահանդես այն կա-րող է դրական ազդեցություն ունենալ համայնքների, հասարակության տարբեր խմբերի, անհատների փոխհարաբերու-թյունների, ընկերայնության, սերտաց-ման, հարգանքի ձևավորման վրա, միաժամանակ նպաստել տոնահանդես-ների զարգացումների՝ հայկական միջա-վայրին պատմականորեն և քաղա-քակրթորեն հարազատ մշակույթին մոտեցմանը և հասարակական զվար-ճանքի ձևավորմանը: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արա-ռատյան Հայրապետական թեմի երի-տասարդաց միությունը, «Կէան» և «Մա-սունք» հասարակական կազմակերպու-թյունները նպաստում են տոնի վերա-կանգնմանը և տարածմանը:

			տոնը տեղի էր ունե-նում փետրվարին կամ մարտի սկզբին և կապվում էր գարնան գալուստի հետ: Զվարճություն-ներն արթնացող բնությանն ուրախ դիմավորելու խոր-հուրդն ունեին, ու մարդիկ միմյանց մաղթում էին բարի կենդանություն: Ներկայացումները կառնավալային էին, դիմակավորներով, դերերը՝ իրական կյանքի և իրական անձերի նմանակում-ներ: Ներկայացում-ները խմբավորվում են կենցաղային, պատմական, էթնո-մշակութային, սիրային	կյանքի խելահեղ արագությունը, մարդկանց մշակու-թային, գեղագի-տական և հասա-րակական նոր պահանջմունք-ները, լրատվական դաշտի մատչելիու-թյունը, անշուշտ, ներգործում են Բարեկենդանի ընթացքի, ձևի, բովանդակության փոփոխություն-ների վրա, որը նոր զարգացումներ է ապրում ինչպես վերածնվի, այնպես էլ ծավալների ու նոր դրսևորում-ների իմաստով (տես Հ. Խառատ-յան-Առաքելյան, Հայ ժողովրդական		

			և արժեքային համա- կարգը ներկայացնող թեմաների շուրջ:	տոները, Երևան, 2005, էջ 76-95):		

».

3) լրացնել նոր՝ 13-20-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

05.11.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ